Վ. Ա. ԴԱՐՅԱՆ

ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՏՆՏԵՍԱԳԵՏ Մ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Սովետական իշխանության տարիներին ստեղծվեց հայ տնտեսագիտական մտքի պատմությունը։ Լույս տեսան մի քանի ուրվագծեր։ 1961 թ. «Հայկետհրատի» հրատարակությամբ լույս տեսավ պրոֆեսոր Խ. Դուլանյանի «Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ» արժեքավոր աշխատությունը։

Այնտեղ հեղինակը ի շարս հայ մարքսիստական տնտեսագիտական մտքի ականավոր ներկայացուցիչների, հիշատակում է նաև քննարկվող դարաշրջանի ոչ մարքսիստական մի քանի տնտեսագետների։ Նա բուրժուական լիբերալ տնտեսագիտության ներկայացուցիչներ է անվանում Մ. Ա. Բունիաթյանին և Վ. Ֆ. Թոթոմյանցին, միաժամանակ նշում է, որ նրանք չեն զբաղվել հատկապես Հայաստանի էկոնոմիկայի հարցերով, բայց մասնակցել են հայ ժողովրդի հասարակական կյանքին, թեպետ և Հայաստանում չեն ապրել (տե՛ս էջ 394)։ Սա ճշմարտացի գնահատական է։

Մի կողմ թողնելով Վ. Ֆ. Թոթոմյանցի հարցը, մեր այս հոդվածի նպատակն է անդրադառնալ միայն տնտեսագետ Մ. Ա. Բունիաթյանի վերաբերյալ Խ. Ա. Դուլանյանի կողմից տրված բնութագրմանը և տալ մի քանի կարևոր պարզաբանումներ այդ կապակցությամբ։

Ինչպես նշում է Խ. Դուլանյանը, ոստիկանության տվյալներով «Մենտոր Աբրամով (իմա Աբրահամի — Վ. Դ.) Բունիաթյանը Երևանի նահանգի Նախիջևանի գավառի բնակիչ էր» և ապա ավելացնում է, որ «Բունիաթյանի մասին այլ տեղեկություններ չկան»։ Ինչպես երևում է Խ. Դուլանյանը օգտվել է ոստիկանության տվյալներից, որը գիտական աղբյուր հանդիսանալ չի կարող։ Պրոֆեսոր Խ. Գ. Դուլանյանը, ինչպես երևում է նրա մենագրությունից, ծանոթ է միայն նրա մի աշխատությանը, որը լույս է տեսել 1915 թ. Մոսկվայում և կոչվում է «Экономические кризисы» և որը, ինչպես գրում է հեղինակը, իբր թե՝ «առաջին անգամ հրատարակվեց 1899 թվականին» գերմաներեն և ֆրանսերեն լեզուներով։

Այս հոդվածով մենք չենք ցանկանում տալ Մ. Բունիաթյանի լրիվ բնութագրությունը, վերլուծել նրա տեսական դրույթները, թվել նրա մի տասնյակից ավելի աշխատությունները, որոնք լույս են տեսել արտասահմանում 1907-ից մինչև 1965—66 թվականները։ Համաձայն լինելով, հիմնականում Մ. Բունիաթյանի բնութագրմանը, որպես բուրժուական տնտեսագիտության ներկայացուցչի, ինչպես նաև «Տնտեսական ճգնաժամեր» աշխատության մասին նրա տված գնահատականին, բաժանելով նաև հեղինակի այն կարծիքը, որ Մ. Բունիաթյանի այդ աշխատությունը արժեքավոր գործ է, չնայած դրա գաղափարական-տնտեսական՝ մարքսիզմին խորթ մի շարք դրույթների, որոնք հանգում են բուրժուական քաղաքատնտեսության սուբյեկտիվ դպրոցի ռեակցիոն տեսակետին, մենք կցանկանայինք, որ մեր տնտեսագետները չբավարարվեին միայն դրանով և պատահաբար իրենց ձեռքն ընկած, հեղինակի միայն մի աշխատությամբ բնութագրեին նրան, որպես տնտեսագիտական մտքի ներկայացուցիչ, այլ կատարեին բոլոր գործերի վերլուծություն։

Մեր կարծիքով, բարեխիղճ գիտնական Խ. Դուլանյանը մեղք չունի, որովհետև Մ. Բունիաթյանը շուրջ 45 տարի ապրում է Ֆրանսիայում, գրում է իր աշխատությունները ֆրանսերեն ու գերմաներեն լեզուներով և նրա մասին մեզ մոտ չկա որևէ գրականություն, նույնիսկ կենսագրական տվյալներ։

Պրպտումներ կատարելով՝ արտասահմանում գործող հայ մշակույթի ներկայացուցիչներին վերհանելու նպատակով, մեզ հաջողվեց արտասահմանից անհրաժեշտ տեղեկություններ ստանալ Մ. Բունիաթյանի գործունեության մասին։ Մեր ձեռքի տակ գտնվող փաստական նյութերը որո-

շակի լույս են սփռում արտասահմանում գործող գիտական-տնտեսագետ Մ. Բունիաթյանի գործունեության վրա և հնարավորություն տալիս որոշ ճշտումներ կատարել Խ. Գուլանյանի աշխատության մեջ թույլ տրված ոչ ճիշտ տեղեկությունների կապակցությամբ։

Սկսենք նրանից, որտեղ Խ. Գուլանյանը ասում է, որ «Բունիաթյանի գիտական գործունեությունը վերաբերում է XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին»։

Սա ճիշտ չէ։ Մ. Բունիաթյանը XIX դարի վերջերին գեռ ուսանում էր, նա ընդամենը 15—16 տարեկան էր և ոչ մի գիտական գործունեություն չի ունեցել։

Նրա առաջին աշխատությունը, որը կոչվում է «Տնտեսական ճգնաժամերի պատմությունը Անգլիայում», լույս է տեսել ոչ թե 1899 թ., ինչպես նշում է Ն. Գուլանյանը, այլ 1907 թ. Մյունխենում միայն գերմաներեն (և ոչ ֆրանսերեն)։ Այստեղից պարզ է, որ նա ոչ թե XIX դարի, այլ XX դարի գործիչ է, մեր ժամանակակիցը։

Մ. Բունիաթյանը ծնվել է 1877 թ. հունվարի 21-ին նախկին Դողթան գավառի (այժմ Նախիջևանի ԱՍՍՀ) Ցղնա գյուղում։ Այս «գյուղ» կոչվածը ավելի շուտ մի փոքրիկ քաղաքի էր նմանվում, քան սովորական գյուղի։ Այնտեղ կառուցված էին 2—3 հարկանի տներ, բնակիչների թիվը մոտ 2000 հոգի էր, ուներ հայկական եկեղեցի, որը մեկն էր հայկական ամենամեծ եկեղեցիներից։ Ցղնան ուներ նաև իր բերդը, որը կարող էր պատսպարել բնակչությանը գտնազան թշնամիների հարձակումներից։

Հողի պակասության պատճառով բնակիչների մեծ մասը զբաղվում էր վաճառականությամբ՝ Կովկասում և Ռուսաստանում, իսկ անցյալում միջնորդի դեր էր կատարում Արևելքի և Վենետիկի միջև։ Մ. Բունիաթյանի հայրը եղել է վաճառական, նախ՝ Նուխի քաղաքում, ապա Մոսկվայում։ Նա զբաղվում էր Կովկասի մետաքսի և բամբակի արտահանությամբ դեպի Մոսկվա։ Մայրը՝ Ագուլիսից էր, այն ժամանակվա ականավոր հասարակական գործիչ Ավետիք Արասխանյանցի քույրը։

Մ. Բունիաթյանը սկզբնական կրթությունը ստացել է Նուխիի դպրոցում։ Ինը տարեկան հասակում նրան ուղարկում են Թիֆլիս Սոֆյա Արղությանի պանսիոնը, ապա սովորում է Թիֆլիսի տղայոց երրորդ գիմնազիայում, որն ավարտում է 1895 թ. արծաթյա մեդալով։

Նույն, 1895 թ. մեկնում է Գերմանիա, գյուղատնտեսական գիտությունների գծով ուսանելու ցանկությամբ, սակայն այնտեղ փոխում է իր մտադրությունը և սկսում է ուսումնասիրել տնտեսական գիտություններ։ Ուսանում է Լայպցիգի, Բեռլինի, Պետերբուրգի և Մյունխենի համալսարաններում։

Մ. Բունիաթյանը երկու տարի աշխատում է Լոնդոնի բրիտանական թանգարանի գրադարանում «Անգլիայի տնտեսական ճգնաժամերի պատմությունը» աշխատության վրա։ 1903 թ. ստանում է Մյունխենի համալսարանի պետական գիտությունների դոկտորի աստիճան, ներկայացնելով իբրև դիսերտացիա՝ «Անգլիայի տնտեսական ճգնաժամերի 1640—1840 տարիների պատմությունը»։ Աշխատությունը լույս է տեսնում 1907 թ.։

1915 թ. Մ. Բունիաթյանը ստանում է Մոսկվայի համալսարանի տնտեսական գիտությունների մագիստրոսի աստիճան՝ ներկայացնելով իբրև դիսերտացիա, 1915 թ. ռուսերեն լեզվով Մոսկվայում լույս տեսած իր «Экономические кризисы» աշխատությունը, որի մասին մանրամասն գրում է Խ. Գուլանյանը։

Նույն թվականին նշանակվում է Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր։ 1916 թ. փոխադրվում է Թիֆլիս, իբրև «Առևտրական բանկի» դիրեկտոր։ 1918—1919 թթ. դասախոսում է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտում։

1920 թ. ամռանը գնում է Փարիզ և հաստատվում է այնտեղ ընդմիշտ։

Ինչպես հաղորդում է Մ. Բունիաթյանը, նա՝ «իր ժամանակին եղել է Երևանի համալսարանի կազմակերպիչ հանձնաժողովի անդամ»։

1925—1940 թթ. նա դասախոսել է Փարիզի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ռուսական բաժնում։ 1938 թ. հրավիրվել է Ժնևի համալսարանում դասավանդելու։

Այժմ նա ապրում է Փարիզում, 90 տարեկան է, և շարունակում է զբաղվել գիտական աշխատանքով։

Տնտեսագիտության մեջ Մենտոր Բունիաթյանը ճանաչված է որպես տնտեսական ճգնաժամերի պատմաբան և տեսաբան։ Նրա «Տնտեսական ճգնաժամերի պատմությունը Անգլիայում» աշխատությունը՝ հիմնված իր ինքնուրույն որոնումների վրա, առաջինն է և մինչև այժմ միակ գիտական փորձը ճգնաժամերի պատմական վերլուծության գործում։ Նրա մյուս աշխատությունը՝ «Տնտեսական ճգնաժամերը», լույս տեսած գերմաներեն, ռուսերեն և ֆրանսերեն՝ երկու հրատարակությամբ, նվիրված է ճգնաժամերի տեսությանը և դիտվում է որպես կլասիկ գործ։

Ոչ պակաս կարևոր է Մ. Բունիաթյանի երրորդ՝ «Արժեքի փոփոխության օրենք» գործը, որի մասին պրոֆեսոր Շարլ Ժիդը[1] արտահայտվում է իր «Քաղաքատնտեսության դասընթաց» աշխատության մեջ, բնորոշելով այն որպես «ամենահամոզեցուցիչ ուսումնասիրություն» արժեքի տեսության մասին։ Մեկ ուրիշ տնտեսագետ որակում է այն որպես «կարևորագույն ներդրում արժեքի տեսության մեջ սուբյեկտիվ դպրոցի մեծ վարպետների աշխատանքներից ի վեր»[2]։ Տնտեսագիտության հիմնական ուսմունքը արժեքի տեսությունն է, և Բունիաթյանի այս գործը այդ տեսության մանրազնին շարադրանքն է, այն բազմակողմանի ուսումնասիրվել է բուրժուական մի շարք տնտեսագետների կողմից։

Վարկի տեսությունը նյութ հանդիսացավ Բունիաթյանի «Վարկը և կոնյուկտուրան» վերնագրով չորրորդ աշխատության համար։ Այստեղ հեղինակը քննադատում է վարկի մասին իշխող տեսությունը։ Նա ցույց է տալիս, որ բանկերը հնարավորություն չունեն վարկեր «կագմելու», ինչպես ընդհանրապես ընդունված է դատել, և որ վարկը ոչ մի ակտիվ դեր չի կատարում տնտեսական կոնյուկտուրայի տատանումների մեջ, մի կարծիք, որն այժմ շատ տարածված է բուրժուական տնտեսագիտության մեջ, և որն ավելի ու ավելի շատ համախոհներ է ներգրավում բուրժուական ջատագովների շարքերից։

Իր «Դեպրեսիա, տեխնիկական պրոգրես և դեվալվացիա» աշխատության մեջ Բունիաթյանը համախմբել է երեք հիմնական տեսություն, որից երկուսը նախօրոք հրատարակվել էին Ազգերի լիգայի օրգան «Աշխատանքի միջազգային ամսագիր»-ում, իսկ երրորդը՝ ավստրիական տնտեսագետների օրգան «Deitschrift fur Nationalēconomie» ամսագրում։ Այդ տեսություններն իր ժամանակին տնտեսագիտական գրականության մեջ մեծ վիճաբանության առիթ տվեցին, որն անցավ Մ. Բունիաթյանի թեզիսների դեմ։ 1916 թ. առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Բունիաթյանը Մոսկվայում լույս ընծայեց հոդվածների մի ժողովածու՝ նվիրված պատերազմական շրջանի էկոնոմիկայի մի քանի հարցերին։ Նկատի ունենալով այդ հոդվածների կարևորությունը, քաղաքների ասոցիացիան և ռուսական զեմստվոներ կազմակերպության կողմից դրանք հրատարակվեցին «Բամբակի արդյունաբերությունը և բամբակի գների ֆիկսացիան» վերնագրի տակ։ Այստեղ կարևոր փաստական տվյալների հիման վրա, Մ. Բունիաթյանը քննադատել է ռուսական կառավարության կողմից իրագործված պատերազմական շրջանի տնտեսական քաղաքականության մի քանի հարցեր, որոնք որոշ չափով նպաստել են նաև այդ քաղաքականության փոփոխմանը։ Այդ աշխատության մասին եղած քննադատական դիտողություններում ընդգծվել են, որ Բունիաթյանը արդի և ինքնուրույն մտքերի տեսաբան է։ Նա առանց տատանվելու ձեռնարկել է տնտեսագիտության տեսության ամենադժվարին և ամենավիճելի պրոբլեմների ուսումնասիրությունը և հասել հիմնավորված լուծումների։ Պրոֆ. Աֆտալիոնը նրա մասին գրել է. «Նա աշխատում է խորը տեսնել։ Նա չի բավարարվում երևույթների մակերեսային բացատրությամբ, այլ ստիպում է իրեն, հիմնավորված բացատրություններով ներթափանցել մինչև իրերի իսկական էությունը»[3]։

Նրա տնտեսական ճգնաժամերի, արժեքի. վարկի և կապիտալի մասին տեսություններն արժեքավոր ավանդ են բուրժուական տնտեսագիտության մեջ։ Այդ աշխատություններում արտահայտված բազմաթիվ դրույթներ դասավանդվել են արտասահմանյան համալսարաններում, շարադրվել են տնտեսագիտական ձեռնարկություններում և դասագրքերում, մեծ ազդեցություն են ունեցել և շարունակում են ունենալ կապիտալիստական երկրների տնտեսագիտության վրա։ Մ. Բունիաթյանի գործերի մեկ ուրիշ բնութագրող գիծը, որը նշվում է բոլոր քննադատների կողմից, դա հեղինակի արտասովոր ընդունակությունն է՝ պարզ և հեշտ ձևով արտահայտելու ամենահանգուցային հարցերը։ Պրոֆ. Լեդերերը այդ առթիվ նույնպես գրում է. «...շարադրման պարզությամբ, պատճառաբանության հստակությամբ, փաստերի ու պատճառների գեղեցիկ հիմնավորմամբ դրանք բացառիկ գործեր են տեսական գրականության մեջ»[4]։

---

[1] Շարլ Ժիդը (1847—1932) ֆրանսիական բուրժուական վուլգար տնտեսագետ է, էկլեկտիկ։ Պատկանում է այսպես կոչված քաղաքատնտեսության պատմական դպրոցին և միաժամանակ պաշտպանում է ավստրիական դպրոցի արժեքի «տեսությունը»։ Նա «կոոպերատիվ սոցիալիզմի» տեսության ակտիվ կողմնակիցը և տեսաբանն է։

[2] „Revista argentina de cienscias politicas", 1928.

[3] „La revue d'Economie politique", Paris, 1923.

[4] Լեդերերը եղել է տնտեսագիտության պրոֆեսոր Հայդելբերգի համալսարանում։ Նա մարքսիստ էր և հրատարակում էր „Archiw fur socialwissenschaft und socialpolitik" հանդեսը։ Ֆաշիստական դիկտատուրայի հաստատումից հետո նա հեռանում է Գերմանիայից, մեկնում է Ամերիկա, աշխատում է որպես պրոֆեսոր, այնտեղ էլ վախճանվում է։

Բացի այս գործերից, Մ. Բունիաթյանը լույս է ընծայել տարբեր բովանդակությամբ տնտեսագիտական բազմաթիվ հոդվածներ ռուսական, ֆրանսիական, գերմանական և անգլիական տնտեսագիտական ամսագրերում։ Նա մոտ հիսունի չափ զրույցներ է ունեցել ֆրանսիական ռադիոյով արդի տնտեսագիտության հարցերի շուրջը։

1950 թ. լույս տեսած մի աշխատության մեջ Մ. Բունիաթյանը խիստ քննադատում է 1949 թ. ամերիկական վերաթողարկման առթիվ տնտեսական ճգնաժամերի դեմ մարտնչելու մասին՝ Միացյալ ազգերի մի խումբ էքսպերտների հաղորդագրությունը։ Նա գտնում է, որ տնտեսական ճգնաժամերի պատճառների բացատրությունը այդ ոչ գիտակ «էքսպերտներից» կողմից հիմնովին սխալ է, իսկ ճգնաժամերի դեմ մարտնչելու իրենց առաջադրած միջոցները՝ անվավեր, կամ, նույնիսկ, «անհանդուրժելի»։

Իր վերջին գրքում՝ «Տնտեսական ֆլյուկտյուացիաները» (տատանումներ, շեղումներ — Վ. Դ.)՝ հրատարակված 1958 թ. ամփոփել է ֆրանսերեն լեզվով տնտեսագիտական ամսագրերում լույս տեսած իր հինգ ուսումնասիրությունները։ Դրանցից մեկը նվիրված է Ջ. Մ. Քեյնսի[5] «կիրառման» կեղծ տեսության քննադատությանը, որը, սակայն, վերջին 3 տասնյակ տարիներին չարաբաստիկ ազդեցություն է ունեցել կապիտալիստական տնտեսագիտության ու քաղաքատնտեսության վրա։ Երկրորդը՝ քննադատում է 1945—1952 թթ. Ֆրանսիայում կիրառվող Ջ. Մ. Քեյնսի դաղափարներով ներշնչված ինֆլյացիոն քաղաքականությունը, որն արժեքազրկեց դրամը և խոչընդոտեց պատերազմից հետո երկրի վերակառուցումը։ Մյուս ուսումնասիրությունները նվիրված են տնտեսական տատանումների մեջ վարկի դերի և ճգնաժամերի քայքայիչ ազդեցության հարցերին, ինչպես նաև այդ կապակցությամբ բուրժուական տնտեսագետների հրապարակած աշխատությունների քննադատությանը։ Այս և մի շարք այլ աշխատություններում հեղինակը մի քանի պարզաբանումներ է տալիս ճգնաժամերի իր տեսության, և Ա. Աֆտալիոնի կողմից ընդունված այդ տեսության սխալ մեկնաբանության մասին։

Աֆտալիոնը (1874—1956)՝ ֆրանսիացի նշանավոր տնտեսագետ-տեսաբան էր, պրոֆեսոր՝ նախ Լիլլի քաղաքի և հետո՝ Փարիզի համալսարաններում, տնտեսական ճգնաժամերի, դրամի արտաքին առևտրի, սոցիալիզմի մասին մի շարք ստվար աշխատությունների հեղինակ։

Աֆտալիոնը՝ իր մի աշխատության մեջ նույնությամբ շարադրել էր Մ. Բունիաթյանի ճգնաժամերի մասին տեսությունը, այդ տեսության հիմնադիրը համարելով իրեն։ Շատ ֆրանսիական տնտեսագետներ ծանոթ չլինելով Մ. Բունիաթյանի աշխատություններին, երկար ժամանակ որպես այդ տեսության հիմնադիրը ընդունում էին Աֆտալիոնին։ Այդ սխալ կարծիքին վերջ տալու նպատակով հրապարակված իր վերջին աշխատություններում Մ. Բունիաթյանը ապացուցում է, որ Աֆտալիոնը ամբողջությամբ արտագրել է նրանից շատ առաջ լույս տեսած իր աշխատության դրույթները։ Աֆտալիոնին մեղադրում է գրագողության մեջ, ցույց տալով, որ նա կատարել է ամենամեծ բանագողությունը, որ «երբևիցե» կարելի էր հանդիպել գիտությունների մեջ»[6]։

1965 թ. հոկտեմբերին լույս տեսավ Մ. Բունիաթյանի վերջին գիրքը՝ «Mestnories economiques et Albert Aftalion» նույնպես նվիրված Աֆտալիոնի տեսության քննադատությանը, իսկ 1966 թ. փետրվարին գրեց մի հոդված Բելգիական տնտեսագիտական հանդեսի պատվերով՝ „Revue des sciences economiques" հարցի շուրջը։ Այսպիսով՝ Մ. Բունիաթյանը գրել է ոչ թե մի աշխատություն, այլ մի քանի կապիտալ աշխատություններ, որոնցից են՝ «Տնտեսական ճգնաժամեր և գերկապիտալիզացում», Մյունխեն, 1907 թ. (գերմ.), Տրնտեսական ճգնաժամերի պատմությունը Անգլիայում», Մյունխեն, 1907 թ. (գերմ.), «Տնտեսական ճգնաժամերը», Մոսկվա, 1915 թ. (ռուս.), «Բամբակի գների ֆիկսացիան և բամբակեղենի արդյունաբերությունը», Մոսկվա, 1916 թ. (ռուս), «Տնտեսական ճգնաժամերը», Փարիզ, 1922 թ. և 1930 թ. (ֆր.), «Արժեքի փոփոխության օրենքը և գների գլխավոր շարժումները», Փարիզ, 1933 թ. (ֆր.), «Դեպրեսիա, տեխնիկական պրոգրես և դեվալվացիա», Փարիզ, 1935 թ. (ֆր.), «Տնտեսական անկայունություն» ուսումնասիրությունների ժողովածու, Փարիզ, 1958 թ. (ֆր.), «Ալբ. Աֆտալիոնի տնտեսական թեորիան», Փարիզ, 1965 թ. (ֆր.) և այլն։

Բացի վերոհիշյալ աշխատություններից, Մ. Բունիաթյանը գրել է բազմաթիվ հոդվածներ նվիրված ժամանակակից կապիտալիստական հասարակության տնտեսական զարգացման հրատապ հարցերին։

---

5 Ջոն Մեյնարդ Քեյնսը (1883—1946) անգլիական բուրժուական տնտեսագետ էր, իմպերիալիստական ռեակցիայի և պատերազմների գաղափարախոս։

6 M. Buniatian, Des fluctuations economiques, Paris, 1959.

Ներկա հոդվածի սահմանները մեզ հնարավորություն չեն տալիս մանրամասն թվարկել և գիտականորեն վերլուծել այդ աշխատությունները, թողնելով այն մի այլ պատեհ առիթի։

Այս հոդվածը կարող է հիմք ծառայել հայ տնտեսագիտական մտքի հարցերով զբաղվող սովետական տնտեսագետներին՝ «տար երկրներում ապրող և աշխատող հայ տնտեսագետների հայացքների վերլուծման, նրանց աշխատությունների հետ լրիվ ծանոթանալու միջոցով տալ դրանց ճշմարտացի և գիտականորեն օբյեկտիվ գնահատականը։

Այսպիսով, մեր ունեցած տեղեկությունների հիման վրա դալիս ենք այն եզրակացության, որ Մենտոր Բունիաթյանը ոչ թե XIX դարի գործիչ է, այլ XX դարի, մեր ժամանակակիցը։

Նրա առաջին աշխատությունը՝ ճգնաժամերի մասին, լույս է տեսել ոչ թե 1899 թ., այլ՝ 1907 թ., ոչ թե 2 լեզվով, այլ միայն մեկ՝ գերմաներեն։

Սփյուռքահայ տնտեսագետ Մ. Բունիաթյանը իր աշխատություններում քննադատական մոտեցում ունի բուրժուական գոեհիկ տնտեսագիտության ներկայացուցիչների որոշ գրությունների, ժամանակակից բուրժուական քաղաքատնտեսության որոշ կատեգորիաների նկատմամբ և շատ հարցերում հակադրվում է դրանց։ Այդ կապակցությամբ նա արտահայտում է որոշ առաջադիմական մտքեր, տալիս է ինքնուրույն նոր դրույթներ, որոշ հարցերում մոտենում է նույնիսկ քաղաքատնտեսության կատեգորիաների մարքսիստական սահմանումներին, բայց դրանցից հեռու չի գնում։ Շատ հարցերում նա հայտնաբերում է անհետևողականություն և ի վերջո հանգում է քաղաքատնտեսության սուբյեկտիվ դպրոցի հայացքների։ Չնայած այդ բոլորին, Մ. Բունիաթյանի աշխատությունները բովանդակալից են, փաստարկումներով առատ և հանդիսանում են օգտակար տնտեսագիտական ուսումնասիրություններ արդի կապիտալիզմի մասին, որն արժանի է սովետական տնտեսագետների ուշադրությանը։ Սփյուռքահայ տնտեսագիտների մեջ իր պատվավոր տեղն ունի տնտեսագիտության դոկտոր Մ. Բունիաթյանը։